

Հաստատված է

Վավերացնում եմ

ՀԱԱՀ գիտական խորհրդում

ռեկտոր

Ա. Թարվերդյան

„-----“, ----- 2016 թ.

„-----“, ----- 2016 թ.

(արձանագրություն №)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ

ՍՏԱԺՈՐ – ԴԱՍԱԽՈՍԻ

Կ Ա Ն Ո Ն Ա Կ Ա Ր Գ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Համալսարանի ամբիոններում դասախոս-ստաժորի հաստիք սահմանվում է բացառիկ դեպքերում՝ ամբիոնը երիտասարդ գիտամանկավարժական կադրերով համալրելու և սերնդափոխությունը բնականոն կարգով իրականացնելու համար:
2. Դասախոս-ստաժորի աշխատանքի ընդունումը, նրա պարտականությունները և իրավունքները սահմանվում է սույն կանոնակարգով:
3. Ստաժորի հաստիք կարող են զբաղեցնել մինչև 35 տարեկան համապատասխան բարձրագույն կրթություն ունեցող դիպլոմավորված մասնագետներ, մագիստրատուրա ավարտածներ, ասպիրանտներ, ինչպես նաև տվյալ մասնագիտության գծով գիտական աստիճան ունեցող անձինք:
4. Ստաժորը աշխատանքի է ընդունվում ամբիոնում գիտամանկավարժական գործունեությամբ զբաղվելու համար, անհրաժեշտ որակական ցուցանիշներ դրսևորելուց հետո:
5. Ստաժորի հաստիքը համարվում է ամբիոնի լրացուցիչ հաստիք, որի թեկնածությունը ներկայացնում է ամբիոնը ֆակուլտետի երաշխավորվածությամբ և հաստատվում է ռեկտորի հրամանով:
6. Ստաժորի աշխատանքը համակարգումը է համապատասխան ամբիոնի վարիչը և համալսարանի շարունակական ուսուցման բաժինը:
7. Ստաժորի ամսական աշխատավարձը որոշվում է սահմանված կարգով, ոչ պակաս քան դասախոսին տրվող, հաշվի առնելով գիտական աստիճանը:

ՄՏԱԺՈՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

8. Ստաժոր դասախոսը պարտավոր է.

- 8.1. Իր գործունեության ընթացքում ղեկավարվել սույն կանոնակարգով: Նրա վրա տարածվում են նաև դասախոսի բոլոր պարտականությունները:
 - 8.2. Սահմանված ժամանակահատվածում իր ուսումնական գործընթացը կազմակերպել ուսումնական պլանին համապատասխան՝ մասնակցել բոլոր դասընթացներին և հանձնել նախատեսված ստուգաքմերն ու քննությունները:
 - 8.3. Դասախոսական, լաբորատոր-գործնական պարապմունքներ, մանկավարժական հմտություն ձեռք բերելու համար, մասնակցել տվյալ առարկայի, դասավանդման մեծ փորձ ունեցող, դասախոսի դասախոսություններին և լաբորատոր պարապմունքներին:
 - 8.4. Աշխատանքի ընթացքում ծանոթանալ ամբիոնի ուսումնամեթոդական, գիտամեթոդական աշխատանքներին և ամբիոնում տարվող ուսումնական գործընթացներին:
9. Ստաժորը ուսման ընթացքում կարող է վարել շուրջ 100 ժամ ուսումնական ծանրաբեռնվածություն:

ՄՏԱԺՈՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ

10. Ստաժոր-դասախոսը կարող է.
- 10.1. Օգտվել այն բոլոր իրավունքներից, որից օգտվում են դասախոսները:
- 10.2. Պահանջել, որպեսզի իր համար կազմակերպվող անհատական համակարգումը հանձնարարվի գիտամանկավարժական աշխատանքի փորձ ունեցող, հմուտ դասախոսների:
- 10.3. Ինքնուրույն աշխատանքի կատարման համար պահանջել հնարավոր պայմաններ, անհրաժեշտության դեպքում նաև համապատասխան նյութեր և սարքավորումներ:
- 10.4. Մասնակցել ամբիոնի, ֆակուլտետի և համալսարանի կողմից կազմակերպվող գիտագործնական միջոցառումներին (գիտաժողովներ, սեմինարներ և այլն):